ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՌԵՄԻԿԻ

ՖԻԶԻԿԱԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ը. 00.01. - «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Մ Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հարություն Ալեքսանի Մարզպանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Զոյա Աղվանի Թադևոսյան

տնտեսագիտության թեկնածու, դեցենտ
Հասմիկ Նորիկի Գալստյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մարտի 27-ին ժամը 13:30 Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2015 թ. փետրվարի 26-ին

015 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը:

Ժամանակակից պայմաններում երկրի տնտեսական առաջընթացը գլխավորապես պայմանավորվում է տնօրինվող մարդկային կապիտալի քանակական ու որակական չափանիշներով: Հետարդյունաբերական հասարակության մեջ գլխավոր արտադրողական ուժը դառնում է մարդը, ուստի տնտեսական աճի ավանդական գործոններն անհրաժեշտ է դիտարկել նոր մոտեցումներով:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտը ակտիվ կերպով նպաստում է մարդկային կապիտալի ձևավորման և կուտակման գործընթացին՝ ներազդելով մարդկային կապիտալի գրեթե բոլոր բաղադրիչների վրա: Ներկայում իրավամբ կարևորվում է կրթության և գիտության դերը մեր երկրի զարգացման գործում, այս համատեքստում, սակայն, հաճախ է թերագնահատվում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նշանակությունը, որը ոչ պակաս կարևոր է հանրության համար: Պետք չէ մոռանալ, որ հարուստ և զարգացած երկիր՝ նշանակում է նաև առողջ ազգ և կյանքի միջին տևողության բարձր մակարդակ: Այս առումով, մեծ է ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների դերը մարդկային կապիտալի վերարտադրության գործում՝ որպես հիվանդությունների կանխարգելման, երիտասարդությանը վնասակար սովորություններից զերծ պահելու և ակտիվ կյանքի տևողության երկարացման միջոց:

Միևնույն ժամանակ, ֆիզիկական կուլտուրան և սպորտը ինտենսիվ ներգործություն ունեն պետության և հասարակության տնտեսական կյանքի վրա՝ աշխատուժի որակի, առաջարկի և պահանջարկի կառուցվածքի, սպառողների վարքի, արտաքին տնտեսական կապերի, տուրիզմի և տնտեսական այլ ցուցանիշների վրա: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը միջոց է աշխատուժի լիարժեք վերականգնման և աշխատանքի արդյունավետության բարձրացման համար: Բացի այդ, մեծ է սպորտի դերը նաև միջազգային հարաբերությունների ոլորտում: Հարկ է նշել, որ սպորտը նաև քաղաքականություն է և միջոց՝ երկիրը համաշխարհային հանրությանը լավագույնս ներկայացնելու:

Շուկայական հարաբերությունների զարգացման և գլոբալացման պայմաններում նշանակալիորեն փոփոխվում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերը և դրանից բխող սոցիալ-տնտեսական հետևանքները: Եթե ոչ վաղ անցյալում այս ոլորտը առավելապես առողջապահական և սոցիալական պահանջմունքներ էր բավարարում, ապա ներկայում բուռն զարգացում է ապրում սպորտի ինդուստրիան՝ իր բոլոր ենթակառուցվածքներով, որը ոչ միայն փոփոխություններ է առաջացնում կուտակվող ֆիզիկական կապիտալում (մարզադաշտեր, սպորտային համալիրներ, մարզական գույքի և մարզա-

սարքերի արտադրություն, սպորտի գովազդային համակարգ, օլիմպիական ենթակառուցվածքներ և այլն), այլև՝ մարդկային կապիտալում: Սպորտը, առողջ ապրելակերպի աջակցմանը զուգընթաց, վերածվում է աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխատուժի վերականգնման, սոցիալական կապերի ամրապնդման, տեխնոլոգիական նորամուծությունների խթանման արդյունավետ միջոցի, որով ներդրումներ են կատարվում և նոր որակներ են հաղորդվում երկրում կուտակված մարդկային կապիտալին: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի զարգացումը կարելի է բնորոշել որպես ներդրումների անհրաժեշտություն կրթության, ուսուցման, առողջության պահպանման աշխատանքի պայմանների բարելավման գործում: Այսպիսի ներդրումների նպատակը աշխատանքի արտադրողականության բարձրացումն է, ներդրված կապիտալի շահույթի մեծացումը:

Վերջին տասնամյակում մարդկային կապիտալում ներդրումների սոցիալ-տնտեսական գնահատման հիմնախնդիրները գտնվում են հայազգի և արտասահմանցի շատ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Սակայն երկրի տնտեսական զարգացման և մարդկային կապիտալի որակական փոփոխությունների փոխառնչության հիմնախնդիրները մինչ այժմ չեն ուսումնասիրվել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատման տեսանկյունից:

Ատենախոսությունում փորձ է արվել լրացնել այդ բացը՝ առաջին անգամ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտը ուսումնասիրելով տնտեսագիտական տեսանկյունից, շեշտադրում է կատարվել առավելապես ֆիզկուլտ-ծառայությունների զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների տեսամեթոդաբանական գնահատումներին, ինչն էլ նախորոշել է գիտական հետազոտության նպատակը և ատենախոսության առջև դրված խնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Հետազոտության նպատակն է բացահայտել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման և մարդկային կապիտալի կուտակման փոխառնչությունները, ինչպես նաև, գնահատել սպորտային ինդուստրիայի ազդեցությունը մարդկային կապիտալի ձևավորման և վերարտադրության վրա, ներկայացնել առաջարկություններ ՀՀ-ում այդ ոլորտի զարգացման վերաբերյալ վերոհիշյալ համատեքստում: Այդ նպատակով առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ֆիզիկական կուլտուրային և սպորտին առնչվող սոցիալ-տնտեսագիտական հայացքները և դրանց զարգացման էվոլյուցիան,

▪ դասակարգել սպորտային ծառայությունների մատուցման և մարդկային կապիտալի վերարտադրության պատճառահետևանքային փոխառնչությունները,

▪ բացահայտել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ֆինանսավորման հիմնախնդիրները՝ սպորտային ինդուստրիայի զարգացման միջազգային փորձի վերլուծության հիման վրա,

▪ առաջարկել սպորտային ծառայությունների մատուցման ֆինանսական տարբեր աղբյուրների համակցման արդյունավետ մեխանիզմ՝ որպես մարդկային կապիտալի ընդլայնված վերարտադրության ապահովման գործոն,

▪ ներկայացնել ՀՀ-ում մատուցվող ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների զարգացման միջոցով մարդկային կապիտալի կուտակման հեռանկարները՝ հստակեցնելով վերջինիս գնահատման գործոնային մոտեցումները:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտն է ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի ծառայությունների մատուցման շուկան իր ենթակառուցվածքներով՝ փոխկապակցված մարդկային կապիտալի կուտակման գործընթացի հետ:

Հետազոտության առարկան ՀՀ ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի զարգացման այն խնդիրներն են, որոնք փոխառնչվում են մարդկային կապիտալի որակական փոփոխությունների մակրոտնտեսական արդյունքների չափման, գնահատման և դրանց հիման վրա արդյունավետ կառավարչական որոշումների կայացման հետ:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ոլորտի կառավարման, և հատկապես, ներդրումային քաղաքականության իրականացման, վերլուծության ու կարգավորման վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրատարակումները, աշխատանքային փաստաթղթերը, մակրոտնտեսական վերլուծությունները, ՀՀ-ում սպորտի զարգացման ոլորտի օրենսդրությունը և դրանից բխող նորմատիվային ակտերը: Օգտագործվել են նաև ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների վերաբերյալ նորմատիվային ակտեր, կանոնակարգեր և ֆինանսական տվյալներ, ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի շուկայի տնտեսական վիճակագրությունը և այդ բնագավառին առնչվող այլ նյութեր:

Հետազոտության մեջ կիրառվել են գիտական աբստրակցիայի, ֆինանսատնտեսական, վիճակագրական, գործոնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:

Հետազոտության գիտական նորույթը մարդկային կապիտալի համատեքստում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման սոցիալ-տնտեսական արդյունքների գնահատումն է ՀՀ-ում: Մասնավորապես.

- ՀՀ սպորտի ոլորտը գնահատող տնտեսավիճակագրական ցուցանիշ-ների վերլուծության հիման վրա տրվել է ֆիզկուլտ-սպորտային գործա-ռույթների և դրանցից բխող արդյունքների դասակարգում, որը հիմք է ծառայել մարդկային կապիտալի կուտակման գործոնային վերլուծության նոր՝ լրամշակված մոտեցման հիմնավորման համար,
- ստոխաստիկ կապերի վերլուծության շրջանակում մշակվել է ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների ու մարդկային կապիտալի վերարտադրության փոխկապվածության քանակական գնահատման մեխա-նիզմ, որի արդյունքում բացահայտվել են ֆիզիկական կուլտուրայի զարգացման և մարդկային կապիտալի կուտակման փաստացի փոխառնչու-թյունները,
- բացահայտվել են զանգվածային և պրոֆեսիոնալ սպորտի ազդեցության ուղիները երկրում կուտակվող մարդկային կապիտալի բաղադրիչների ձևավորման վրա՝ հաշվի առնելով ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների շուկայի առանձնահատկությունները և սպորտի ոլորտում հանրային ու մասնավոր շահերի ներդաշնակեցման անհրաժեշտությունը,
- առաջարկվել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման համակցված ֆինանսավորման մեխանիզմ՝ հաշվի առնելով հանրային, մասնավոր և այլ աղբյուրները, որը կնպաստի ինչպես ՀՀ-ում սպորտի ինդուստրիայի զարգացմանը և ներդրումային միջավայրի գրավչության ապահովմանը, այնպես էլ՝ ազգաբնակչության շրջանում ձևավորվող մարդկային կապիտալի որակական փոփոխություններին:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիալ տնտե-սական հետևանքների գնահատման բնագավառի տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն է, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված մարդ-կային կապիտալի որակական հատկանիշների բարելավման տեսանկյունից ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի շուկայի մասնակից կազմա-կերպություններում՝ նպաստելով մարդկային կապիտալում ներդրումների

սոցիալ-տնտեսական արդյունավետության չափման, գնահատման, վերլուծության, վիճակագրության, կառավարման ու տնտեսավարման կարգավորման հետ կապված առկա և հնարավոր հիմնախնդիրների լուծմանը:

Հետազոտության փորձարկումը և հրատարակումները:

Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ իրականացվել են մի շարք աշխատանքային քննարկումներ տնտեսագետ-տեսաբանների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, սպորտի կարգավորման և վերահսկողական կառույցների ներկայացուցիչների հետ: Կատարված հետազոտության արդյունքները քննարկվել և արժանացել են հավանության Հյուսիսային Համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովում, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտում, ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների և առաջարկությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Այն ընդգրկում է 19 գծապատկեր և 9 աղյուսակ: Ատենախոսության ծավալը, առանց հավելվածի, կազմում է 146 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպված են ստացված գիտական արդյուքները և նորույթը, ինչպես նաև արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսական հարաբերությունների առանձնահատկությունները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում» գլխում ներկայացվել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վերաբերյալ սոցիալ-տնտեսագիտական հայացքների էվոլյուցիան, քննարկվել են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիալ-տնտեսական հիմախնդիրները:

Տնտեսագիտական միտքը հարյուրամյակներով ուսումնասիրության գլխավոր օբյեկտ էր համարում նյութական հարստությունը՝ դրա արտադրությունը, բաշխումն ու կուտակումը: Թեև այսօր էլ աղքատությունը և առաջնային անհրաժեշտության պահանջմունքների բավարարման անհնարինությունը մնում են որպես կարևորագույն խնդիրներ, հատկապես թույլ զարգացած երկրներում, 20-րդ դարի 60-ականներից սկսած տնտեսական գործունեության իմաստն ու նշանակությունն ուղղված է բնակչության կյանքի որակի բարելավմանը:

Նյութական բարիքների արտադրությունն, անշուշտ, իր նշանակությունը չի կորցնում նաև այսօր, սակայն դրա տնտեսական արդյունավետությունը պետք է որոշվի բարձր որակավորված կադրերի, նոր գիտելիքների, տեխնոլոգիաների և կառավարման մեթոդների օգտագործմամբ: Համաշխարհային տնտեսության հեռանկարային զարգացումը 21-րդ դարում բնութագրվում է արտադրողական ուժերի զարգացման նոր մակարդակով, որում արտացոլվում են հետարդյունաբերական հասարակությանը բնորոշ գծեր՝ ծառայությունների, գիտության և կրթության առաջնայնություն:

Ներդրումները մարդկային կապիտալում, որպես կանոն, հանգեցնում են աշխատանքի արտադրողականության աճին, արտադրության արդյունավետության բարձրացմանը: Կրթության, առողջապահական սպասարկման, և կենսակերպի բարելավման միջոցով մարդկային ներուժի ընդլայնման գործողությունները ազդում են տնտեսական աճի հեռանկարի վրա, հատկապես մարդկային հնարավորությունների զարգացման ցածր մակարդակ և փոքր եկամուտներ ունեցող երկրներում: ՀՆԱ-ի մինչև 40%-ը զարգացած երկրները ստանում են արդյունավետ կրթական համակարգի զարգացման արդյունքում: Ֆիզիկական դաստիարակությունը, որպես կրթության և առողջապահության բաղադրիչ, նույնպես նպաստում է մարդկային կապիտալի կուտակմանը: Այս համատեքստում ատենախոսության մեջ կարևորվել է նրա ազդեցության շրջանակի, ինչպես նաև, սոցիալ-տնտեսական հետևանքների բացահայտումը:

Հետազոտությունում ներկայացվել է նաև սպորտային ինդուստրիան՝ որպես տնտեսական գործունեության ոլորտ, ինչպես նաև, տրվել են ֆիզկուլտ սպորտային ծառայությունների տարբեր մեկնաբանություններ, քննարկվել ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների շուկայի առանձնահատկությունները:

Սպորտային ինդուստրիայի ընդլայնումը նշանակալի ազդեցություն է գործում տնտեսության զարգացման վրա, իր հետ բերելով նաև սոցիալ-տնտեսական հետևանքներ, և դրանով ազդելով մարդկային կապիտալի որակական փոփոխությունների վրա: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը, ներթափանցելով տնտեսավարման տարբեր ոլորտներ, գործարարության նոր որակներ է ստեղծում, ձևավորում է սպորտային ինդուստրիային հատուկ տնտեսական հարաբերություններ և սոցիալ-տնտեսական հետևանքներ՝ ապահովելով ներդրումային գրավչություն, լրացուցիչ աշխատատեղեր, հարկային մուտքեր, սպորտային միջոցառումները սպասարկող ենթակառուցվածքներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին, համաշխարհային մասշտաբով հատկապես բարձր եկամտաբերություն է գրանցվում զանգվածային դիտահանդեսներ պահանջող մարզաձևերում, որտեղ տնտեսական արդյունքներ են գրացվում առավելապես սպորտը

սպասարկող ծառայությունների ոլորտում: Սպորտային ինդուստրիան զարգանում է տնտեսության մյուս ճյուղերի հետ փոխկապակցված՝ արդյունաբերության, տուրիզմի, տրանսպորտի, կապի, շինարարության հետ, ինչը մուլտիպլիկատիվ էֆեկտ է ունենում ՀՆԱ-ի աճի վրա: Դա հատկապես ցայտուն է դրսևորվում խոշորամասշտաբ մարզական մրցումների կազմակերպման արդյունքում: ՀՀ-ում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի տնտեսական արդյունքերը բավական դժվար է գնահատել, քանի որ վիճակագրական հաշվետվություններում ոլորտը ներկայացվում է տարբեր ոլորտների հետ համախառն արդյունքներով, ինչը սակավ տրամադրվող ֆինանսական միջոցների անարդյունավետ օգտագործման նպաստավոր պայմաններ է ստեղծում:

Ֆիզկուլտ-սպորտայի ծառայությունների էությունը մեկնաբանելու համար հետազոտության մեջ հստակ տարանջատվել են ֆիզիկական կուլտուրա և պրոֆեսիոնալ սպորտ հասկացությունները, քանի որ այսօր դրանք վեր են ածվել միմյանցից տարբեր /ըստ նպատակների, միջոցների և արդյունքների/՝ սակայն փոխկապակցված երկու հասարակական երևույթների, որոնց փոխ-հարաբերություններն առնչվում են տնտեսավարման հանրային և մասնավոր գործառույթների հետ: Բացի այդ, ժամակակակից սպորտային ինդուստրիան ներառում է նաև մարզահագուստի, մարզակոշիկների, զույքի, մարզասարքերի արտադրության ոլորտը: Որպես սպորտային ինդուստրիայի առանձին բաղկացուցիչ կարելի է առանձնացնել մարզատեղեկատվական բիզնեսը (մասնագիտացված սպորտային ռադիո և հեռուստաալիքները, տեղեկատվական գործակալությունները, մարզական հրատարակչությունները և այլն) և մարզական կառույցների բիզնեսը (մարզադաշտեր, լողավազաններ, մարզադահլիճներ, մարզահամալիրներ):

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ծառայությունների շուկայի վերլուծության արդյունքում ներկայացվել են մի շարք առանձնահատկություններ, ինչպեսիք են մեծ դինամիզմը, տարածքային սեգմենտավորումն ու լոկալ բնույթը, կապիտալի պտույտի մեծ արագությունը՝ որպես արտադրական կարճ ցիկլի հետևանք, միջին և փոքր ձեռնարկությունների գերակշռումը, բարձր զգայունությունը շուկայի կառուցվածքին՝ կապված ծառայությունները տեղափոխելու կամ պահեստավորելու անհնարինության հետ, ծառայությունների մատուցման առանձնահատկություններ՝ կապված արտադրողի և սպառողի անմիջական շփման հետ, նշված ծառայությունների անհատականությունը և ոչ ստանդարտությունը, շատ դեպքերում արդյունքի անորոշությունը, տեղեկատվական ասիմետրիկության առկայությունը սպորտային ծառայություններ մատուցողների ու սպառողների միջև և այլն:

Քննարկելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գծով մատուցվող ծառայությունների դերն ու նշանակությունը ՀՀ տնտեսավարման համակարգում, ներկայացվել են մի շարք խնդիրներ, որոնց լուծումը կարող է

հանգեցնել ոլորտի տնտեսական արդյունքների գնահատման կատարելագործմանը և ռեսուրսների օպտիմալ բաշխմանը: Դրանց շարքում առանձնացվել են ոլորտի տնտեսական վիճակի, ֆինանսական հոսքերի վերաբերյալ ստույգ տեղեկությունների հավաքումը՝ ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր սպորտային ծառայությունների մասով, ֆիզիկական կուլտուրան և սպորտը, որպես տնտեսության սոցիալական ոլորտի առանձին արտադրաճյուղ, առանձին տողով ազգային վիճակագրական հաշվետվություններում ներկայացնելու, ինչպես նաև, սպորտային ինդուստրիայի զարգացման հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը, որում պետք է ներկայացվեն հանրապետությունում ոլորտային ներդրումներ իրականացնելու մեխանիզմներ, սպորտի ծառայությունների շուկայում մրցակցային դիրքեր գրավելու գնահատականներ, ինչպես նաև սպորտի զարգացման սոցիալ-տնտեսական հետևանքների վերլուծական համակարգեր:

Ատենախոսության երկրորդ՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ազդեցությունը մարդկային կապիտալի ձևավորման վրա» գլխում ներկայացվել են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչության տեսամեթոդաբանական մոտեցումները:

Որպես ամբողջական հայեցակարգ՝ տեսության մեջ մարդկային կապիտալի հիմնախնդիրները հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են մարդկային կապիտալում ներդրումներին և դրանց արդյունավետության գնահատմանը: Մարդկային կապիտալի տեսության ներկայացուցիչների բազմաթիվ բնորոշումները հանգում են նրան, որ մարդիկ, ներդրումներ կատարելով սեփական անձի համակողմանի զարգացման վրա, մեծացնում են իրենց արտադրողական և սպառողական ունակությունները՝ զգալիորեն փոփոխելով եկամուտների կառուցվածքը: Հետևաբար, մարդկային կապիտալը ոչ թե բնածին ունակություններն են, այլ մարդու կուտակած հատկությունները, որոնք կարող են ձևավորվել յուրաքանչյուր անհատի կենսագործունեության ընթացքում: Բնածին հատկություններն, այս դեպքում, հանդես են գալիս միայն որպես մարդկային կապիտալի արդյունավետ ձևավորմանը նպաստող գործոններ: Մարդու՝ որպես կապիտալային արժեքի հիմնախնդիրը տեսական մի շարք հետազոտություններում քննարկվում է զուտ դրա բաղադրիչների վերլուծության մակարդակով՝ կրթության, առողջության, աշխատուժի վերականգնման, կյանքի տևողության, միգրացիայի և այլն: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը մեծ ազդեցություն ունեն բաղադրիչներից յուրաքանչյուրի վրա՝ այն կրթության բաղադրիչ է կրթական բոլոր մակարդակներում, ֆիզիկական ակտիվությունը ոչ միայն առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, այլև դրանց արդյունավետ բուժման միջոց է, ֆիզիկական մարզումները ազդում են կյանքի տևողության երկարացման, և հատկապես, ակտիվ կյանքի

տևողության վրա, նպաստում աշխատուժի արդյունավետ վերականգնմանը և այլն:

Ատենախոսության այս գլխում տրվել է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի սոցիալ-տնտեսական շարժառիթների նոր դասակարգում, որում դիտարկվող շարժառիթների հետևանքները կարող են դրսևորվել մարդկային, նյութական, ֆինանսական, սոցիալական կապիտալներում: Սակայն հետազոտությունում դրանք քննարկվել են մարդկային կապիտալի ձևավորման շրջանակներում:

Հանրային շահերին զուգընթաց, ներկայում ակտիվորեն ձևավորվում են նաև սպորտի զարգացման գործարար շահեր: Շուկայական հարաբերություններին յուրահատուկ տնտեսական հարաբերությունները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համեմատաբար նոր են ձևավորվում՝ զարգացման փուլում են գտնվում սպորտի ինդուստրիան, սպորտային ձեռնարկատիրությունը, սպորտային տուրիզմը և դրանց ենթակառուցվածքները: ՀՀ-ում միայն վերջին տարիներին են սկսել ձևավորվել մարզական պրոֆեսիոնալ ընկերություններ և վետերանների միություններ, որոնք մշակում են մարզիկների բազմատեսակ ռիսկերից և վնասվածքներից ապահովագրելու սխեմաներ, մշակվում են տրանսֆերտների քաղաքակիրթ տեսակներ՝ ազգային և օտարերկրյա մարզական ակումբների մարզիկների համար: Մարզական ենթակառույցների բնագավառում նույնպես որոշակի պոզիտիվ տեղաշարժեր են նկատվում՝ վերջին տարիներին ձևավորվել է արտադրության մի ողջ բնագավառ, որը հիմնված է մարզազանգվածային միջոցառումների վրա:

Միևնույն ժամանակ, պետք է ընդգծել երկու կարևոր հանգամանք, որոնք նվազեցնում են հանրային ռեսուրսներով սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացման արդյունավետությունը: Դրանցից առաջինը ֆինանսավորման իրականացումն է ոչ թե զարգացման, այլ սպորտային կրթօջախների նվազագույն մակարդակի ապահովման համար: Ժամանակակից սպորտի ինդուստրիան պահանջում է լուրջ ֆինանսական ներդրումներ, որոնք մեր հանրապետության պետական ֆինանսների սուղ պայմաններում հնարավոր չէ իրականացնել և արդյունքում նման ֆինանսավորումը ոչ թե զարգացման, այլ դեռևս զուտ գոյատևման նպատակ է հետապնդում: Երկրորդ բացասական հանգամանքը սպորտային կազմակերպությունների և խմբերի գերկենտրոնացումն է մայրաքաղաքում, ինչը խախտում է ֆիզիկական կուլտուրայի զարգացման ֆինանսական միջոցների համամասնական բաշխումը մարզերում և առաջացնում հանրապետության ողջ տարածքում սպորտի զարգացմանն ուղղված ծառայությունների ծավալների համահարթեցման խնդիր:

Աղյուսակ 1. Սպորտի ծախսերի տեսակարար կշռի դինամիկան ՀՀ պետբյուջեի կազմում (%)[1]

Ցուցանիշներ	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014թ.
Սպորտային ծրագրերի ծախսերը	0,106	0,103	0,092	0,091
Մանկապատանեկան սպորտ	0,009	0,008	0,014	0,014
Սպորտային բժշկություն	0,007	0,007	0,006	0,007

ՀՀ պետական բյուջեի միջոցներով հանգստի և սպորտի ֆինանսավորման վերջին տարիների դինամիկան վկայում է, որ ՀՀ-ում հանրային ռեսուրսներով այդ ոլորտների ֆինանսավորումը ոչ միայն չի մոտենում զարգացած երկրների համանուն ցուցանիշների մակարդակին, այլև ինչ որ չափով նվազման միտում ունի:

Բացի այդ, ՀՀ-ում սպորտի և հանգստի ոլորտի ընդհանուր ֆինանսավորման մեջ հանրայինի մասնաբաժինը անհամեմատ փոքր է զարգացած երկրների համանուն ցուցանիշից, որը միջինում հատում է 25 %-ի շեմը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի կառավարման և ֆինանսավորման ձևերը յուրաքանչյուր երկրում պայմանավորված են կիրառվող «սպորտի մոդելով»: Կախված այն հանգամանքից, թե ինչ չափով է դրսևորվում պետության դերը ոլորտի ֆիանսավորման համակարգում, որոշվում է դրա կազմակերպաիրավական կառուցվածքի կայունությունը: Որոշ երկրներում, օրինակ ԱՄՆ-ում, պետության մասնակցությունը բավականին սահմանափակ է ֆեդերալ կառավարության կողմից ուղղակի ֆինասավորման իմաստով: Սակայն շատ արդյունավետ է գործում անուղղակի ֆինանսական աջակցության մեխանիզմը, այդ թվում՝ և՛ հարկային քաղաքականության և՛ վարկային արտոնությունների միջոցներով:

Եվրոպական երկրներում առավել տարածված է սպորտի կառավարման և ֆինանսավորման մեկ այլ մեթոդ, երբ պետությունը, պահպանելով սպորտի ոլորտի ինքնավարությունը, ֆինանսական աջակցություն է տրամադրում լրավճարների ձևով, ինչն իրականացնում է տարբեր նախարարությունների ու վարչությունների, ինչպես նաև մարզական ֆեդերացիաների միջոցով:

---

[1] Կազմված է ՀՀ երիտասարդության և սպորտի նախարարության տրամադրած տվյալներով:

ՀՀ-ում առավել արդյունավետ կարող է լինել սպորտի ֆինանսավորման և կառավարման ֆրանսիական մոդելի հարմարեցումը, որը հիմնված է խառը՝ մասնավոր-պետական ֆինանսավորման վրա և, կարծես, միջանկյալ տարբերակ է սպորտի ամերիկյան ու նախկին սոցիալիստական երկրների մոդելների միջև:

Ուսումնասիրելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ֆիանսավորման համաշխարհային փորձը, ատենախոսը առաջարկել է.

- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ֆինանսավորումը իրագործել պետական ու մասնավոր միջոցների համակցման ճանապարհով, ներգրավելով նաև այնպիսի այլընտրանքային աղբյուրներ, ինչպիսիք են հովանավորչությունը, սպորտային վիճակախաղը, սպորտային գովազդը, արտոնագրային գործունեությունը, մրցումների հեռարձակման իրավունքի վաճառքից եկամուտը և այլն,
- հետևողականորեն իրականացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ծառայությունների նկատմամբ հարկային և վարկային արտոնությունների տրամադրում, որի արդյունքում հնարավորություն կընձեռնվի խնայված դրամական միջոցները վերաուղղելու ոլորտի զարգացմանը,
- երկրի բարձրագույն և միջին մասնագիտական կրթական համակարգերում պատրաստել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մարքեթինգի և մենեջմենթի մասնագետներ, ինչի արդյունքում էապես կբարելավվի ոլորտի կառավարման համակարգը:

Ատենախոսության երրորդ՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման և մարդկային կապիտալի ձևավորման փոխազդեցությունը ՀՀ-ում» գլխում ներկայացվել են մարդկային կապիտալի գնահատման հիմնախնդիրները սպորտի ինդուստրիայում: Ֆիզիկական կուլտուրայի և մարդկային կապիտալի փոխկապվածության ուսումնասիրության շրջանակում կարևորվում է նաև կապիտալի չափումը: Որպես կանոն, ցանկացած երկրում կուտակված մարդկային կապիտալի քանակական չափումների ոլորտում՝ կառուցվածքային տարբեր բաղադրիչների պատճառով դժվարություններ են ստեղծվում: Ելնելով դրանից, ինչպես տեսության մեջ, այնպես էլ գործնականում կուտակված մարդկային կապիտալի արժեքի չափումը իրականացվում է ագրեգատային համաթվով:

Վերջին տարիներին մարդկային կապիտալի համաթվի հաշվարկը կատարվում է երկրների տնտեսական աճի, զարգացման կայունության և մրցակցային դիրքերի հիմնարար տեսանկյունից: Համաշխարհային տնտեսական ֆորումը պարբերաբար մարդկային կապիտալի վարկանիշային սանդղակ է ներկայացնում, որտեղ բերվում են տարբեր երկրներում կուտակված մարդկային կապիտալի քանակական չափումներ: Մինչ վերջերս, մարդկային կապիտալի քանակական չափման ժամանակ ինչպես գործարարների, այնպես էլ կառավարման օղակների կողմից առավելապես

հաշվի էին առնվում կրթությունը, աշխատանքային փորձը, հմտությունները և կարողությունները, որոնք անշուշտ որոշիչ դեր ունեն երկրի տնտեսական աճի գործընթացում: Սակայն, ներկայում մարդկային կապիտալի չափման հաշվարկներում որոշիչ նշանակություն են ձեռքբերում նաև բիոֆիզիկական կարողությունները, առողջապահական և կենսապահովման որակները, մտավոր արդյունքներ ձևավորող հատկանիշները: Հետևաբար, մարդկային կապիտալի արժեքը ներկայացվում է հասարակության ֆիզիոլոգիական, տնտեսական և սոցիալական համատեքստով, որի շրջանակում ուրվագծվում է, թե որքանով և՛ անհատը, և թե՛ հասարակությունը օգուտներ կքաղի և կնպաստի կապիտալի ոչ միայն պարզ, այլև ընդլայնված վե-րարտադրությանը:

Անշուշտ, մարդկային կապիտալի համաթվի չափման նման մոտեցման առավելությունները ակնհայտ են, քանի որ այն բազմաթիվ գործոններ է հաշվի առնում՝ սկսած մարդկային կապիտալի ձևավորումից մինչև հետագայում իրականացվող ներդրումները: Այն ընդգրկում է կրթական գործընթացը, կենսապահովման, սոցիալական փոխառնչության որակները, մշակութաբարո-յական հատկանիշները, մտավոր կարողությունները, և վերջապես հաշվի է առնում մարդկային կապիտալում շարունակական ներդրումների գործընթացը: Սակայն մյուս կողմից, ազրեգատային համաթվում տարանջատված չեն ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտները, որոնց դերը մարդկային կապիտալի չափումներում էական է:

Մարդկային կապիտալի համաթվի վարկանիշային սանդղակում 122 երկրների մեջ ՀՀ-ն իր առջև թողնում է շուրջ 7 տասնյակ երկրներ, ինչն ըստ մասնագիտական գրականությունում հնչող կարծիքների, առավելապես երկրում ձևավորված գործազրկության մակարդակի և գործարարության հնարավորությունների միջավայրի թույլ մրցակցային դիրքերի արդյունքն է, որը բնականաբար երկրում ձևավորում է միգրացիոն ռիսկեր:

Գծապատկեր 1. Ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների և մարդկային կապիտալի որակական փոփոխությունների փոխկապվածության գնահատման առաջարկվող մեխանիզմը[2]



[2] Կազմված է ատենախոսի կողմից:

Հատկանշական է, որ միջազգային փորձագետները սպորտի և ֆիզիկական կուլտուրայի արմատավորումը համարում են մարդկային կապիտալի որակական բարձրացման կարևորագույն գործոն և այն ընդգրկում են կապիտալի արժեքային գնահատման առաջարկվող մոդելներում: Սակայն, մակրոտնտեսական տեսանկյունից միգուցե այդ գործոնը առավել առաջնային չհամարվելով, տարանջատված չի ներկայացվում մարդկային կապիտալի վարկանիշավորման միջազգային սանդղակում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի ու մարդկային կապիտալի կուտակման փոխառնչության շրջանակը բացահայտելու համար հաշվարկվել են ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների զարգացման և մարդկային կապիտալի որակական ցուցանիշների փոփոխման միջև կապի սերտության գործակիցներ: Ընդ որում, փոխկապակցվածությունները գնահատվել են համակողմանի՝ հաշվի առնելով վերլուծությունում ընդգրկված բոլոր ցուցանիշների փոխառնչությունները և ավտոկորելյացիայի ազդեցությունը:

Գործոնային կապերի վերլուծությունից պարզվել է (գծապատկեր 1), որ ՀՀ-ում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի ցուցանիշների փոփոխությունը չի հանգեցնում մարդկային կապիտալի որակական բաղադրիչների լուրջ տեղաշարժերի: Այսպես, առանձնակի փոխառնչություն չի դիտվում ցուցանիշների այնպիսի խմբերի միջև, ինչպիսիք են, մի կողմից, ալկոհոլիզմով և թմրամոլությամբ հիվանդացությունների, առաջին անգամ բացահայտված հիվանդությունների քանակի, գործազրկության մակարդակի, տնտեսական ակտիվության, և մյուս կողմից, սպորտային խմբերի, մարզիչների թվաքանակի և զանգվածային սպորտային ծառայությունների: Դրան զուգահեռ, էական փոխկապվածություն է նկատվել մի կողմից ՀՆԱ-ի աճի, պետբյուջեի միջոցներով սպորտային ոլորտի ֆինանսավորման և, մյուս կողմից, մարզիկների, մարզիչ-մանկավարժների թվաքանակի, սպորտային խմբերի քանակի փոփոխությունների միջև:

Հետևաբար, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը ՀՀ-ում հիմնականում ծառայում է սպորտային միջավայրին, և դեռևս իր զգալի ներդրումը չունի կուտակված մարդկային կապիտալի որակական հատկանիշների բարելավման գործընթացում, որը պայմանավորված է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բյուջետային սուղ ֆինանսավորմամբ և մասնավոր հատվածի կողմից համանուն ծառայությունների մատուցման բարձր արժեքով: Այստեղից էլ, սպորտը ՀՀ-ում դեռևս չի նվաճել զանգվածային զարգացման այնպիսի մակարդակ, որն ապահովի սոցիալ-տնտեսական զգալի արդյունքներ:

Եզրակացություններ

Ֆիզիկական դաստիարակության և սպորտի զարգացման սոցիալ-տնտեսական հետևանքների տեսական, ինչպես նաև գիտագործնական վերլուծությունների հիման վրա կատարվել են մի շարք եզրակացություններ և

ներկայացվել առաջարկություններ՝ ֆիզկուլտ-սպորտային ծառայությունների զարգացման միջոցով ՀՀ-ում ձևավորվող մարդկային կապիտալի որակական հատկանիշների բարելավման ուղղությամբ.

1. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը հասարակական արտադրությանը չեն ծառայում անմիջականորեն, սակայն երկարաժամկետում էականորեն նպաստում են վերջինիս արդյունավետության բարձրացմանը՝ ինչպես մարդկային կապիտալի որակական բարելավումների, սպորտային ինդուստրիայի ընդլայնման ճանապարհով՝ ֆիզիկական կապիտալի աճի, այնպես էլ սոցիալական կապիտալի ձևավորման միջոցով:
2. ՀՀ բնակչության ներկայիս սոցիալ-տնտեսական վիճակը դեռևս լուրջ հիմքեր չի ստեղծում այնպիսի կարծրատիպերի վերացման համար, երբ ազատ ժամանակի գերակշիռ մասը ծախսվում է զվարճանքի և ժամանցի վայրերում և պատշաճ ուշադրություն չի դարձվում ֆիզիկական կուլտուրային և սպորտին, այսինքն՝ հասարակության մեջ ձևավորված չէ անհրաժեշտ «սպորտային մշակույթ»:
3. ՀՀ-ում առաջացել են երկրում պատրաստված մարզիկների և մարզիչների արտահոսքի լուրջ ռիսկեր, քանի որ ակնառու է զարգացած երկրներում պրոֆեսիոնալ սպորտից առավել մեծ չափերով եկամուտներ վաստակելու հնարավորությունը:
4. Ֆիզիկական կուլտուրայի զարգացումը ՀՀ-ում հիմնականում ընկալվում է որպես «սպորտի զարգացում՝ հանուն սպորտի» գործընթաց: Գործող օրենսդրական դաշտի ուսումնասիրությունը, ինչպես նաև կազմակերպությունների կանոնադրությունների վերլուծությունը վկայում են այն մասին, որ տնտեսավարման թե՛ հանրային, և թե՛ մասնավոր հատվածում դեռևս լուրջ խթաններ չեն գործում զանգվածային ֆիզիկական կուլտուրայի արմատավորման ուղղությամբ:
5. ՀՀ-ում դեռևս մշակված չէ սպորտային ինդուստրիայի զարգացման հայեցակարգ և պետական ռազմավարություն, ինչի առկայությամբ հնարավոր կլիներ արդյունավետ որոշումներ կայացնել սպորտի զարգացման ներդրումային դաշտում՝ բարձրացնելով սպորտային ծառայությունների սոցիալ-տնտեսական հատույցը:
6. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը, որպես տնտեսության սոցիալական ոլորտի առանձին արտադրաճյուղ, նպատակահարմար է առանձին տողով ներկայացնել ազգային վիճակագրական հաշվետվություններում, կատարելագործելով ոլորտի տնտեսական վիճակի, ֆինանսական հոսքերի, տեղեկատվության հավաքագրման գործընթացը՝ ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր սպորտային ծառայությունների մասով, որն էլ հնարավորություն կընձեռնի ոլորտի զարգացման ֆինանսական ռեսուրսների օպտիմալ բաշխման համար:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Պողոսյան Մ.Ռ. Մարդկային կապիտալի մեկնաբանումների շուրջ, // Տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Միջազգային գիտաժողովի նյութեր, 13-14 հունիսի 2014 թ., ԵՀՀ, Երևան, էջ 66-74:

2. Պողոսյան Մ.Ռ. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի ֆինանսավորման հիմնախնդիրները, Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 7, 2014թ., էջ 29-38:

3. Պողոսյան Մ.Ռ. Ֆիզկուլտ-սպորտային բաղադրիչը կրթության մեջ // Թեզիսներ ՖԿՊՀԻ XXXX գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր. Երևան, 2013, էջ 286-291:

4. Պողոսյան Մ.Ռ. Ֆիզիկական կուլտուրայի դերն ու նշանակությունը տնտեսական զարգացման գործում // Թեզիսներ ՖԿՊՀԻ XXXVII գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր. Երևան, 2010, էջ 254-258:

5.Պողոսյան Մ.Ռ. Սպորտային ծառայությունների և մարդկային կապիտալի փոխկապվածության քանակական գնահատման հիմնախնդիրները // Վիճակագրության արդի հիմնախնդրները Հայաստանի Հանրապետությունում, Միջազգային գիտաժողովի նյութեր, ԵՀՀ, Երևան 2014, էջ 70-77:

ПОГОСЯН МАРГАРИТА РЕМИКОВНА

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И СПОРТА В КОНТЕКСТЕ ТЕОРИИ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА

Резюме диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01- “Общая экономика”.

Защита диссертации состоится 27-го марта 2015г. в 13:30 на заседании специализированного совета по экономике 015 ВАК РА, действуюшего в Ереванском государственном университете, по адресу: г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

Р Е З Ю М Е

Физическая культура и спорт активно способствуют формированию и накоплению человеческого капитала, выступая значимым фактором увеличения продолжительности жизни и трудоспособного возраста людей, а также одним из основных компонентов подготовки качественных трудовых ресурсов, а следовательно, и фактором обеспечения экономического роста.

Целью диссертационного исследования является выявление взаимосвязей между развитием физической культуры и спорта и накопленем человеческого капитала, а так же оценки влияний спортовной индустрии на процесс формирования и воспроизводства человеческого капитала в РА. Для достижения этой цели в диссертации были поставлены следующие задачи:

- проанализировать социально-экономические взгляды на физичекую культуру и спорт в их эволюционном развитии,
- классифицировать причинно-следственные взаимосвязи предоставления спортивных услуг и репродукции человеческого капитала ,
- выявить проблемы финансирования физической культуры и спорта на основе анализа международного опыта развития спортивной индустрии,
- предложить эффективный механизм, комбинирующий различные источники финансирования предоставления спортивных услуг, как фактор обеспечения расширенного воспроизводства человеческого капитала,
- предложить перспективы накопления человеческого капитала путем развития физкультурно-спортивных услуг, предоставляющихся в РА, на основе уточнения оценки факторных подходов.

Научная новизна исследования заключается в следующем:

- На основе анализа экономико-статистических показателей сферы физической культуры и спорта РА дана классификация спотривных функций и вытекающих

результатов, что послужило основой для применения нового, доработанного подхода факторного анализа накопления человеческого капитала.

- Разработан механизм количественой оценки взаимозависимостей между воспроизводством человеческого капитала и физкультурно-спортивными услугами в рамках анализа стохастических связей, в результате чего выявлены фактические взаимоотношения развития физической культуры и накопления человеческого капитала.
- Выявлены пути воздействия массового и профессионального спорта на образование компонентов накопления человеческого капитала в стране, учитывая особенности рынка физкультурно-спортивных услуг и необходимость достижения гармонии общественных и частных интересов в спортивной сфере.
- Предложен комбинированный механизм финансирования развития физической культуры и спорта, учитывая общественные, частные и другие источники. Это способствует как развитию спортивной индустрии и обеспечению привлекательности инвестиционной среды в РА, так и качественным изменениям в формировании человеческого капитала среди населения.

Основные научные результаты диссертации заключаются в следующем:

- Физическая культура и спорт не служат общественному производству непосредственно, но в долгосрочном промежутке времени, значительно влияют на его эффективность, как путем качественного улучшения человеческого капитала, роста физического капитала за счет расширения спортивной индустрии, так и через формирование социального капитала.
- Нынешняя социально-экономическая ситуация населения по-прежнему не представляет собой серьезную основу для ликвидации стереотипов, когда большая часть свободного времени тратится на развлечения и отдых, не уделяя должного внимания физическому воспитанию и спорту, то есть в обществе не сформирована необходимая "спортивная культура".
- Как отдельную индустрию социльной сферы экономики, физическую культуру и спорт целесообразно представлять отдельной строкой в национальных статистических отчетах, улучшая процесс сбора информации, финансовых потоков и экономического положения сферы.
- В РА пока не разработана концепция равития спортивной индустрии, наличие которой способствовало бы эффективным решениям в области инвестирования в развитие спорта, повышая социально-экономическую отдачу спортивных услуг.

POGHOSYAN MARGARITA REMIK

SOCIAL-ECONOMIC PROBLEMS OF DEVELOPMENT OF PHYSICAL EDUCATION AND SPORT IN THE CONTEXT OF THEORY OF HUMAN CAPITAL

The abstract of the dissertation for pursuing of academic degree of PhD of Economics in the field 08.00.01 – "General Econimics"

The diffence of the dissertation will take place at 13.30 on March 27, 2015 at the Meeting of Specialized Council 015 of Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan, Yerevan, 009.

ABSTRACT

The sphere of physical education and sport actively promotes formulation of human capital and accumulation procedure affecting on almost all the components of human capital.

The aim of the research is to explore the relationship between development of physical education and sport and accumulation of human capital, as well as evaluate the influence of sport industry on the formulation and reproduction of human capital, represent suggestions for the development of this sphere in the RA in the abovementioned context. With this purpose the following tasks have been designated.

- studying social-economic views relating to physical education and sport and the evolution of their development,
- classifying causal relationship between sport services and reproduction of human capital,
- exploring the issue of financing of physical education and sport based on the analysis of the experience of international sport industry development,
- suggesting an effective mechanism for various finacing sources on behalf of sport services as a factor for ensuring human capital expanded reproduction,
- representing the perspective of human capital accumulation through development of physical-sport services offered in the RA making clear the factoral approaches of the latter's assessment.

THE MAIN RESULTS OF THE RESEARCH AND SCIENTFIC NOVELTY

The scientific novelty of the research is the evaluation of social-economic results of the development of physical education and sport in the context of human capital in the RA, particularly:

- based on the analysis of economic-statistical index of the sport sphere in the RA a classification for physical-sport functions and the results arising from it was given which served as a base for the factoral analysis of human capital accumulation to support the new approach.

- In the frames of analysis of stochastic connections a quantitative evaluation mechanism for physical-sport services and human capital accumulation correlation was formed. As a result, factual correlations between physical education development and human capital accumulation were discovered.
- The means of influence of mass and professional sport on the formulation of components of accumulating human capital in the country were discovered taking into consideration the specifications of physical-sport service market and the necessity of harmony between private and public interests in the sphere of sport.
- A united financing mechanism for physical education and sport was suggested taking into consideration public, private and other sources, which will promote the development of sport industry and ensure sport industry development in the Republic of Armenia and investment atmosphere attraction as well as human capital qualitative changes arising among population.

Conclusion

1.Based on the theoretical, as well as scientific-practical analysis of physical education and sport development for social economic consequences, a series of conclusions were made and a proposal was presented through physical-sport service development towards improvement of human capital qualitative features in the RA.

2.Physical education and sport do not serve to social production directly, but in a long-term periodit has a great impact on the effectiveness of the latter through human capital qualitative advancement and extension of sport industry.

3.Today's social-economic situation of the population of the RA still doesn't create a series of bases to eliminate such stereotypes when prevailing part of free time is spent on entertainment and leisure and proper attention is not paid to physical education and sport, i.e. the essential "sport culture" is not formulated in the society.

4. Serious risks of flow of sportsmen and coaches from the RA were created so far as it is evident that there are more opportunities to earn great incomes from professional sport in developing countries.

5.The sport industry development conception is not formulated in the RA yet, however, in case of it's availability of which it would be possible to make effective decisions in sport development investment field.

6. It is expedient to represent physical education and sport as a separate branch of social sphere of economics with separate line in national statistical reports promoting the procedure of the spheres of economic situation, financial flows, informational recruitment which will give an opportunity for optimal distribution of financial resources for the development of the sphere.